

ժողովի իմն վարել զիմբագրութիւն «Արարատաց սահմանելին առ այս կարդաւ զիմբողայոսն Քարամեան անուանելիք ընդհանուր խմբագիր» տաշը նմին գործակից զՅովհաննեմն Յովհաննիսեան. կրօնական բաժնի լիցի պատասխանատու բարեշնորհ Կարապետ արեղայն, իսկ Մինասն Բէրբէրեան վարեսցէ զընդհանուր անօրէնութիւն ամսաթերթին:

Չեմք յերկրայս զի իւրաքանչիւր ի սոցանէ տրդարացուսցէ զվատաշութիւնն մեր և գուն դործեսցէ արդիւնաւոր առնել զպաշտն իւր ի բարւոք յառաջադիմութեան և յազգաշահ ուղղութեան իմն իսկ պաշտօնական հրատարակութեան ազգիս «Արարատաց», որ իւրովսանն իուղեցեալ է կատարել սրբազն պարտաւորութիւն, ընծայելով ի մէն մի համարի յօդուածս հմտալիցու ի հրահանգել զժողովուրդն մեր ի բարոյական և յեկեղեցական զիսութիւն:

Եւ մեք աղօթս առնեմք առ Հոդին Սուրբ Աստուած՝ որ զիստէ զոկարութիւնս ամենեցուն զօրաւորս առնել, լցուսցէ զիմաս ամենեցուն շնորհօք և իմաստութեամբ:

Ի 19 գեկտ 1894

և յոզդ. Թուականութեան մերում ԱՅԽՈՒ.

Համար 2168

Արքարատեան Մայր Աթոռ Ս. Էլմիածնի
ի ՎԱՐԴԱՐԵԱՊԱՏ:

Ա Զ Դ Դ ։

Աւստրիոյ Պուգովինայի երկիր Առուշաւաքաղաքի մէջը զսնուած Լուսաւորչական Ազգիս Հայոց գաղթականութեան Ազգապետութիւնը և սրբոյ եկեղեցեաց հոգատար անձինքը յայտ առնեն թէ ունին մէծ յոյժ պիտուականութիւն ուշիմ և զուարժ քահանայի մը կամ թէ վարդապետմըն ալ կինայ ըլլալ, միայն թէ ուղածնին այս է, որ նախ Եւրոպական ձեւի աշխարհիս աղնուութիւնները ճանչցող մը ըլլայ, գիտնական, պարիշտ,

ու տեսօք անձ մը և աստուածարան. նաև ամենէն առաջ այս, որ Եւրոպայի լեզուի մը տեղեակի, որնոր առաջին կարգի գերմաներէնի համար կը փափագութի. բայց եթէ չէ, նա էն քիչը գոնէ գաղղիերէն զիտցող որ տեղոյն հանգամանաց և ուղածին համեմատ ներկայացող մը ազգին կարենայ ըլլալու օտար աղցերու դիմաց, որու համար յիշեալ ազգապետութիւն կը առաջարկէ. խոստանալով, նախ որոշակի թոշակ մը տարեկան 2000 մինչ 2,400 ֆրանք, այնուհետեւ բնակարան մը բնակելու համար. և երրորդ՝ բոլոր կերուր յիշուած եկամուտը ըստ մերս Հայաստանինայց ազգիս հին սովորութիւններուն վերաբերեալ. բայց միանգամայն կը խնդրէ որ օր առաջ ըստ ալվեր գրելոց համեմատ դանուող պատուելի անձը, որ ունի զբարեհաճութիւնն և զհամոզութիւնը ասոր համար, նա առանց ուշ մնալու բարի համենայ ազգ առնել այս հասցեով. Wareres Garabet Biller von Prunkul Armen. Cultus Praesidend Sucsava Bucovina Austria միատեղ խրկելով ունեցած վկայականներ նա ցըցընելով թէ որտեղացի է և թէ որ գպրոցի աշակերտ է եղեր:

Պուշտայի Հայոց Ազգային Հոգաբարձութիւնն,

նախագահ

Բայկետ. Վարդերէս Կարապետի

Գօն Բյունգուլ

